

ՆՈՐ ՇԱՐՔ Վ. ԶԱՐԴԱՐԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ
1937-Ի ՇՐՋԱՆ

ԹԻԻ 2

ՅԱԿՈՒԲ Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

ԱՌՏՆԻՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

- Ա. Ժրագրուի կիներ
- Բ. Հարս եւ կեսուր
- Գ. Ամեն բան իր ժամանակին
- Դ. Անկողնոյ կոիւ
- Ե. Քաղաւածք Պարոնեանի սրամտութիւններէն

Առողջ ըլլալու համար

Զուարթ պէտք է ըլլալ:

Կարդացէ՛ք Պարոնեանի գործերը:

ԳԻՆ 2 Ե. Դ.


ԳՐԱՏՈՒՆ Վ. ԶԱՐԴԱՐԵԱՆ
ՇԱՐՔ ՍԻՒԼԷՅՄԱՆ ՓԱՇՄ. ԹԻԻ 31
ԵՍԳՈՒՊԵԱՆ ՇԷՆՔԻՆ ԴԷՄ
ԳԱՀԻՐԷ

ՏՊԱԳՐՈՒԹԻԻՆ
ՅԱԲԷԹ ՊԱՂՏԱՍԱՐ

Տապրէ փողոց թիւ 12Ե.

ԹԻՎ.ՅԻՔԻԵ, ԳԱՀԻՐԷ

1937



891.99

891. 981

7-34

ՆՈՐ ՇԱՐԲ Վ. ԶԱՐԴԱՐԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ
1937-Ի ՇՐՋԱՆ

ԹԻԻ 2

ՅԱԿՈՐ Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

ԱՌՏՆԻՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

- Ա. Ժրագլուխ կիցեր
- Բ. Հարս եւ կեսուր
- Գ. Ամեն բան իր ժամանակին
- Դ. Անկողնոյ կոխ
- Ե. Բազումք Պարոնեանի սրամուրիւններէն

A $\frac{11}{41642}$

Առողջ ըլլալու համար
Զուարթ պէտք է ըլլալ:
Կարգաճէ՛ք Պարոնեանի գործերը:



ԳՐԱՏՈՒՆ Վ. ԶԱՐԴԱՐԵԱՆ
4, ՇԱՐՈ ԻՊՐԱՀԻՄ ՓԱՇԱ 4
(ՇԷՃԷՐՏ ՕԹԷԼԻՆ ՄՕՏ)

ԳԱՀԻՐԷ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՅԱԲԷԹ ՊԱՂՏԱՍԱՐ

Տուարէ փողոց թիւ 12 Ե.
ԹԷՎՅԻՔԻԷ, ԳԱՀԻՐԷ

1937





ՅԱԿՈՒ ՊԱՐՈՆԵԱՆ

Մեր լաւագոյն գրողներու գործերու վերհրատարակութեամբ կուզենք կորուստէ փրկել լաւագոյն գրուածները: Այս տարուան շրջանին պիտի հրատարակենք 10 գրօյլներ Պարոնեանէ, Նուլիսանէ, Արփիարէ եւ ուրիշներէ:

Այս նոր տարին 10 գրօյլներու բաժնենդինն է 20 Ե.Գ. Արտաստման 25 Ե.Գ.:



45393-69

ԱՌՏՆԻՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

11.

ԺՐԱԳԼՈՒԽ ԿԻՆԵՐ

Տիկնայք,

Ձեւ կործեր որ ձեր արժանապատուութեան դըպ-
չիմ և զձեզ բարկացնեմ, եթէ համարձակիմ յայա-
նել թէ շատ կը յարգեմ այն կիներն որոնք աշխատա-
սէր են և կը դործեն օրն ի բուն :

Սողոմոն խնաստուն իր Առակոց մէջ կ'ըսէ. «Կին
ժրագլուխ եթէ ոք գտանիցի, պատուականագոյն է
այնպիսին քան զականս պատուականս» : Կ'երեւի թէ
հին դարուց մէջ ալ ժրագլուխ կին գաննելը դժուար
էր : Դարձեալ միեւնոյն խնաստունն ուրիշ տեղ մը
կ'ըսէ. «Կին ժրագլուխ պատկ է սան իւրում» :

Կը լսէք, ս'վ տիկնայք, որքան կը բարձրացնէ
խնաստունն՝ ժրագլուխ կիները, նախամեծար կ'ընտրէ
զանոնք օղերէ, մատանիներէ, գայլերէ, մանեակ-
ներէ, տպարանջաններէ և մէկ բաւով համայն ուս-
կի զարգերէ, և մինչեւ իսկ կը յանդգնի ժրագլուխ
կնոջմէ պատկ հիւսել և զայն էրկանը գլուխը անցընել :
Կատարելապէս կը ձայնակցիմ խնաստունին, և պիտի
առաջարկէի որ զարդասէր կանայք իրենց դըլ-
խարկներուն մէջ մէկ մէկ թռչուն դնելու տեղ՝ մէկ մէկ
ժրագլուխ կին նստեցնեն : Եւ եթէ կարելի չըլլար
այս՝ իրրեւ խորհրդանշան աշխատատիրութեան իրենց
պարանոցէն մէկ մէկ աւել կտխէին և իրենց գլուխն
ալ մէկ մէկ կաթապ անցունէին : Այսքան կը պաշ-

տե՛մ դործունեայ կի՛նեքն՝ զորս ոչ նուազ պատուով մը
կը յարգէր, կը մեծարէր և մանաւանդ մեզ կը յանձ-
նարարէր Աստուածաշունչին արդարութեան ասեա-
նին նախագահն, Վսեմ. Սողոմոն էֆէնալին, որ ա-
կանջր խօսի, ամէն Կորդեան հանդոյց զմեղիով կը
կարէր և յետոյ երբ զմեղին բթանար՝ մեզի կըլ-
լեցնելու կ'աշխատէր սա բացադանչութիւնը թէ
«Ունայտութիւն ունայտութեանց, ամէնայն ինչ ըն-
դունայն է»:

Դո՛ւք էք տիկնոյք որ առններ կը կործանէք:

Դո՛ւք էք տիկնոյք որ առններ կը շինէք:

Պիտի խնդրէի Աստուծմէ քանի մը վայրկեանի հա-
մար կնիկ ըլլալ և զձեզ չվիրուսորելու համար ըսել
թէ՛ մենք ենք որ առններ կը կործանենք, մենք ենք
որ առններ կը շինենք: Կը տեսնէ՞ք որքան ծանր զո-
հողութեանց յանձնառու կ'ըլլամ որպէսզի կարենամ
ձեզի հետ տնաշառարար խօսիլ առանց ձեր արժանա-
պատուութեան դպչելու:

Ի բաց յինէն կործել թէ դուք դործունեայ չէք,
դուք աշխատատէր չէք, այսու ամենայնիւ ներկեցէք
ինձ քիչ մը կործել թէ կը դանուին նաեւ կանայք
որք կ'աշխատին չաշխատելու: Այդ կանայք եթէ
քանի մը վայրկեան աւել ամեն «օրն ի բուն պարապ
չանցաւք» կ'ըսեն, ու մինչեւ երեկոյ դաշնակ կը
գարնեն:

Ներկայոյցնե՛մ եթէ չէք վշտանար, այդ գասու
վերաբերեալ կին մը:

Կինն անկողնոյ զգեստով բազմոցին վրայ կը քնա-
նայ գլուխը բարձին կռթնցուցած: Գուլպաներն իսկ
անցուցած չէ ոտքն — ոտն աւելորդ է կործեմ սրով-
հետեւ գլուխը շանցուրի դուլպան — երեսն լուա-
ցած չէ, մազերը ցիր ու ցան են: Առջիւը դրուած սե-

դանին վրայ կը տեսնուի պեզիֆի թուղթեր, թէյի գուռաթներ, մէկ միլիոն սպրտած սիկտաներ, գնդասեղներ, սիաւառակի մը մէջ կարագ, հացի փշրանք, նորմայի կտորներէն քանի մը ձայնագիրներ, կտոր մ'ապուխտ, քիչ մը սաւրեկա; Պօրտոյի գինւոյ պարպած շիշ մը, քանի մը կոճակներ; քիչ մը պանիր, էրիկ մարդու բաճկոն մը, Մայսա մը և կարծեմ քիչ մըն ալ խավհար:

— Մարգրիտ, Մարգրիտ, կը ձայնէ այրն:

—

— Մարգրիտ, չեղլտ՞ս, կերակուրի պիտի իջնանք: Մարգրիտ յօրանջերով հազիւ կրնայ բանալ տէրերն ու — Թո՛ղ չես սար որ քիչ մը քնանամ, կ'ըսէ:

— Բանալու ժամանակ է:

— Ժամանակն ինչ է, քունդ դալուն պէս կը քնանաս:

— Տէ՛ր ողորմես

— Էրիկ մարդիկ խըյանէթ են վէսէրամ, ի՞նչ անուշ անուշ կը քնանայի կոր:

— Ել հագուէ՛, ու սըւոնք ժողվէ:

— Սպրտուհին չէ՞ ժողված, շատ ծոյլ կնիկ է սա Սնթառամը, Անհող կնիկ մ'է: Հանրմը այսօր յոգնեցաւ, քիչ մը կը քնանայ կոր երթամ վերը ժողվեմ ըսել չկո՞յ մի:

— Ի՞նչ գործ կար այսօր:

— Տունին գործը կը լիննո՞յ մի. . . էրիկ մարդիկ չիյտեն որ. . .

— Ըսէ որ դիանամ:

— Տունի գործ իչաէ, սա ժողվեմ, նա տեղաւորցնեմ ըսես նէ՛ իրիկուն կ'ըլլայ: Օրերն ալ կարճ են: Կը կարծե՞ս որ մինչեւ իրիկուն պարսպ կը նըստինք, այսօր հոգիս ելաւ:

- Խնչ ըրիր :
- Խնչ պիտի ընեմ . . . բաճկոնիդ կոճակները
բրդեր էր . . . :
- Է՛յ . . . :
- Կոճակը կարեցի :
- Ե՛տքը . . . :
- Դերձան ճարեցի :
- Ուրի՛շ :
- Ասեղ տալի :
- Յետո՛յ :
- Սկսայ կարել մէկիկ մէկիկ :
- Խնչ եղաւ ասկէց :
- Խնչ պիտի ըլլայ , բաճկոնդ կարեցի իշատե՛ :
- Մինչեւ իրիկո՞ւն տուեց :
- Կը նայիմ որ թօճաֆ կը խօսիս . կոճակ է ,
դերձան է , ասեղ է , մէկիկ մէկիկ կարել է , ժամա-
նակ է կ'անցնի , էրիկ մարդ չէ՞ք մի , ատանկ բաներէ
խոսպոր չունիք . կը կարծէք որ կոճակները ասնե-
լուդ պէս թուքով կը վակցնես կը լիննայ կ'երթայ .
վեց կոճակ կարելը բան մը չէ ամա , գործ է վեր-
ջուպէս :
- Ուրի՛շ ի՞նչ գործ կար որ :
- Խնչ գիտնամ , աս տունի գործը կը լիննո՞յ :
- Չամաչը՞ր կար :
- Չամաչը՞րն է միայն տունի գործը , տունի գոր-
ծը կը լիննո՞յ , վախ որ խըյմէթ չիյատէք :
- Աս փշրանքնե՞րն ինչ են հոս :
- Հաց ալ պիտի չուտէինք զանէր :
- Չայի գաւտթնե՞րը :
- Չայ ալ չպիտի խմէինք զանէր :
- Է՛յ աս նոթման :
- Բիանո ալ չպիտի գորնէինք զանէր , էլպէթատ

- մարդ չե՞ս մի, քիչ մըն ալ էյլէնմիջ ըլլալ կ'ուզես :
- Է՛յ տա ապրճխառը, գինին, խաւեա՞րը :
 - Սանկ քիչ մը խանձալթը՞ ալ չպիտի ընէինք զանէր :
 - Ա,ս Մայտա՞ն :
 - Գի՛րք ալ չկարդանք :
 - Է՛յ տա թուղթերըը :
 - Չըսե՞ս որ թուղթ ալ չխաղանք :
 - Լեիլեցուն սիկառները :
 - Լեռնէն եկանք զանէր. սիկառա՞ ալ չխմենք զանէր, վախ որ խըյմէթ չիտես... սերթ մարդ ես. սէ՛րթ, քուկին խօջըթ գալու էր որ կնիկս աղւոր էյլէնմիջ եղեր է աէյի :
 - Ո՞վ կար :
 - Մարդ ալ չիգար տունա... քովի աղջիկները եկան, քիչ մը պեզիկ խաղացինք, բարթին մէկ մէ՛ճխախէի :
 - Աֆէրիմ, աֆէրիմ :
 - Վռնակու էի զանէր, ի՞նչ գիտնամ :
 - Ելիր կերակուր ուտենք .
 - Կերակուր ուտելու իշտա՞ մնաց որ : Անանկ ալ հաւէսով մը կարեցի բաճկոնդ որ իրիկուան դաս նէ՛ աֆէրիմ կնիկս, ըսես աէյի, վախ որ խըյմէթ չիյտէ :
 - Երթանք ուտենք :
 - Դո՛ւն գնա կեր, ես տա տեղուանքը փողվեմ, դիմացինները պիտի գան այս գիշեր, հէ՛մ ես քեզի բան մը ըսե՞մ, Անթուանէթը վռնակու է, հէ՛մէն ուտէ՛, խմէ՛, պաակի՛, քիտնայ. տունին բոլոր գործերը իմ վրաս են. պարտապ տեղը ամսական կուտաս կոր : այսօր հողիս ելաւ նէ, առատընէ մինչև երկկուն նստիլ չունիմ որ. տա տունի գործը կը ըմնայ :

Այրն կ'երթայ ընթրելու և բանակուիւր կը վերջանայ :

Արի՛, ու Սողոմոնին իրաւունք մի՛ տար, եթէ գործունեայ կին մը պտակ է էրկանը, ես ալ կ'ըսեմ թէ գանդաղ կին մը փուշ է էրկանը ոտքին :

Աշխատեցէք, ուրեմն, ո՛վ տիկնայք, ձեր ամուսիններուն գլուխը պճնելու և ոչ ոտքերը :

Բ.

ՀԱՐՍ ԵՒ ԿԵՍՈՒՐ

Տիկնայք,

Այսօր պիտի խօսիմ ձեզ հարս և կեսուրի վրայ : Ինչպէս գիտէք, խնդիրը կարծուածին չափ թեթև է, ուստի ձեր մտանաւոր ուշադրութիւնը կը հրաւիրեմ այս դասին վրայ և կ'ողաչեմ որ դասախօսութեան ժամանակ խելօք նստիք :

Ընդհանրապէս ամէն հարս՝ կեսուր կ'ըլլայ, բնական է որ ամէն կեսուր ալ նախ հարս եղած ըլլայ, բայց չկայ հարս մը որ կեսուրէն, և կեսուր մըն ալ որ հարսէն գո՛հ ըլլայ :

Ամէն կեսուր հարսէն կը գանգատի ըսելով .

— Զիս չսեպեր :

Ամէն հարս կեսուրէն զժգոհութիւն կը յայտնէ կրկնելով միշտ .

— Շատ կը յօսի :

Եւ այն կինը որ հարս և միանգամայն կեսուր է ,
սուտուն հարսին կը դառնայ «Զիս չես սեպեր» կ'ըսէ
և երեկոյին կեսուրին կը դառնայ «դուն ալ շատ կը
խօսիս կոր» կ'ըսէ :

Ի՞նչ գաղտնիք է այս :

Միթէ ամէն կեսուր շատախօս է :

Միթէ ամէն հարս անհնազանդ է :

Ո՛չ և ո՛չ :

Կեսուր մը կ'ատէ հարսն այն համեմատութեամբ
որով կը սիրէ անոր ամուսինը , այսինքն իր աղան .
և հարս մը կը թշնամանէ կեսուրն այն համեմատու-
թեամբ , որով կը պաշտէ իր այրը : Կեսուրը մաքէն
կ'ըսէ .

— Տղաս կարգուելէն ի վեր փոխուեցաւ :

Հարսն ալ իր ձեւերովը հասկցնել կը ջանայ

— Ամուսինս իր մօրը կը զոհէ դիս :

Առաջինն իր ամուսնական սէրը չափազանց կը
գաննէ իր զուկին քով , երկրորդն՝ որդիական սէրն
իւր ամուսնոյն քով . ուստի .

— Զիս չըսեպեր .

— Շատ կը խօսի :

Կեսուրն և հարսը սէրը մէկ գիտեն , ամուսնական
կամ որդիական սէր չեն ճանչնար :

Կեսուրը կ'ուզէ որ զուակն աւելի զինքն սիրէ և
իրաւունք ունի՝ երբ մայրական սէրն իր ընդարձակ
նշոնակուած թիւնովը առնուի : հարսն ալ կը պնդէ որ
ամուսինն զինքը աւելի սիրէ , և յանցաւոր չէ՛ : Արդ
էրիկ մարդու քով եթէ որդիական սէրը հաւաստ-
րակչուռի ամուսնական սիրոյ հետ , հարսին և կեսու-
րին քով նախանձը գաղտնի կը մնայ . իսկ երբ ա-
նուշադրութեամբ կամ անխոհեմութեամբ շարժում ,
ձեւ մը ընէ այրն և յայտնէ թէ որդիական սէրը կամ

ամուսնական սէրը յաղթանակը ստարա՝ ներգաշնակութիւնը կ'աւրուի :

Նախանձն է ուրեմն որ կը դրդէ կեսուրն դէ հարող վարուելու այնպէս որպէս անսանք : Երկուքն ալ գովելի են ինծի համար, որովհետեւ ուր չկայ նախանձ՝ սէր ալ չկայ : Այս այնքան ճշմարիտ է որքան ճշմարիտ է թէ այն հարսը՝ որ չսիրեր իր ամուսինը՝ թոյլ կուտայ անոր որ ուզածին չտի սիրէ իր մայրը՝ զոր ինքն ալ շատ կը սիրէ : Նոյնպէս այն կեսուրն որ պողած է իր զուկէն՝ թոյլ կուտայ որ կրցածին չտի պաշտէ իր կինը՝ զոր ինքն ալ կը յարգէ որքան չյարգեր իր զուակը : Նոյնպէս անհոգ կամ իրենք զիրենք զուարճութեան սուտը կեսուրնուրու և հարսերու մէջ նախանձը դոյւթիւն չունի, վասնզի զբօսանքի և զուարճութեանց անձնատուր՝ ժամանակ չունին, ո՛չ մին և ո՛չ միւսը, հասկնալու համար թէ այրը՝ կի՞նն աւելի կը սիրէ թէ մայրը :

Նախանձոտ կեսուրն ու հարսը գովելի են ըսի, որովհետեւ իրենց սիրոյն ստատկութիւնը կ'ապացուցանեն, բայց գովելի չեն երբ ծայրայեղութեանց կը դիմեն :

Գիտեմ լուսն պէս հարս մը որ օր մը կանուխ երած էր, կրակ շինած էր, և ամբողջ օրն ամսուան մը լաթը լուացեր էր, լաթերը փռեր էր, երբեմն երբեմն վեր ելլելով և կաթ սալով իր քառամսեայ աղուն : Խեղճը մոռցած էր ճաշելու, և իրիկուան դէմ գլխու ցաւ զգալով գլուխը բարձի վրայ կրթնցուցած էր : Այրը սուն կը դառնայ և կը հարցնէ թէ ո՞ւր է հարսը :

— Հիմա հոս էր, չգիտեմ ուր գնաց :

Եւ կ'սկսի գործ անսնել ինքնիրեն ըսելով :

— Հոգիս ելաւ այսօր :

Այրը կ'երթայ կնոջը քով և կը հարցնէ թէ ինչո՞ւ կը պառկի :

— Յոգնեցայ, գլուխս կը ցաւի կոր քիչ մը . կը պատասխանէ :

Այրը կ'աղաչէ մօրն որ դեղ մի շինէ հարսին :

— Ի՞նչ ունի որ :

— Գլուխը կը ցաւի կոր :

— Բոլոր օրը բան չունէր, հիմա՞ բռնեց գլխուն ցաւը . շատ բան, շատ բան . . . երթամ սա կերակուրս նայիմ :

— Ինչ որ է, դեղ մը չշինե՞նք :

— Իրար մ'անցնիր, իրար մ'անցնիր, բան մը չէ ես, կ'անցնի, ես ալ իմին կէնճուլեմանս անանկ գլխու ցաւ մը ունէի . կէնճերուն գլուխը կը ցաւի քիչ մը . . . հէլպէթատէ կ'անցնի . . . սա սեղանը պատրաստեմ :

— Կ'երեւի թէ յոգնած է . . .

— Յոգնած . . . ես կը թողժամ որ հարսս յոգնի, բոլոր օրը ֆէրան ֆէրան պատեցաւ . չօճուխին քանի մը կտոր լաթերը կտր, անոնք լուաց կտրծեմ քի . . . ես ալ հարսս քեզմէ աւելի կը սիրեմ, գործի ելլայ նէ թող չեմ տար որ յոգնի . . . ինչո՞ւ պիտի յոգնեցընեմ, ես անիկա զաւկիս պէս կը սիրեմ . . . երթամ վարը քիչ մը ժողուրեմ . . . տաէ՞թ է որ հարսը յոգնի . . . Ի՞նչ ըրաւ որ պիտի յոգնի . . . ամա մարդկութիւն է . . . մարդուս գլուխը չցա՞ւիր . այսօր քիչ մը շտակեկ պատեցաւ նէ արիւնը գլուխ ելաւ զահէր . . . Ի՞նչ ըսեմ ես . . . :

— Լիմօնի խապուխ կոպէի՞նք ճակտաը կամ քիչ մը բաթաթէս :

— Ճանըմ իրար անցնելու ի՞նչ կայ, ես քեզի չափ չիյտեմ, յիսուն տարեկան կնիկ եմ, իմին ալ

երբեմն գլուխս կը ցուի, բայց բերանս չիմ բանար .
ամէն բան կ'անցնի . . . սիրող մի՛ հառցուններ, միս
բերի՛ր . . . :

— Թող տալու է սր անանկ պուսկի՛ :

— Պրծօլս կ'ուզէիր կոր նէ :

— Օ աը քօլօներ չունի՞նք :

— Օ աը քօլօներ պրծօլս կ'ըլլա՞յ :

— Գլուխը չփէինք :

— Պրծօլս յո՞վ :

— Ո՛ւֆ, մայրիկ, չես հասկնար կոր, օ աը քօ-
լօներով հարսին ճակատը չփենք :

— Ըսներմ ի՞նչ ունի հարսին ճակատը : Աստուած
չընէ, վատնդաւոր բան մը ըլլայ նէ դեղ չե՛մ ընել,
երթամ նայիմ անգամ մը :

Հարսին քովը կ'երթայ և կը դառնայ :

— Մաշտլլա՛հ, բան մըն ալ չունի կէնճը, սանկ
բար մը ցաւ կայ գլխին մէկ կողմը . . . ելաւ, կ'ու-
գայ կոր . . . մարդը խենդ կը դարձնէք, ճանրմ :

Կը ճանչնամ նսեւ յիսնամետայ և դէր կետուր մը
որ օր մը սանդուխէն իջած ասեն սխալ քայլ մը կ'առ-
նէ և սանդուխէն վար կը գլորի . աջ թևը կը ցուցնէ
այնպէս որ չկրնար վեր ելնել, ճակատը և քիթը քարի
դարնուելով կը ճեղքուին :

— Ըսներմ, ինչո՞ւ խենդի պէս կ'իջնաս, քա վո՛յ
պանա, ելի՛ր, բան չկայ, բան չկայ, կ'ըսէ հարսը և
կ'օգնէ կեսուերին որ կանգնի :

— Վո՛յ թեւս . . . , վո՛յ ճակատս . . . , վո՛յ գլուխս . . . :

— Կամոց կամոց ելիր սր նորէն չիջնաս . . . քա
վո՛յ պանա . . . մարդս կոխած տեղը չնայիր, քիչ
մը հաց ծամէ գիր ճակատիդ ու գլխիդ վրայ, բան
մը չէ . . . :

Կեսուրը կը նստեցնէ բազմացին վրայ և կ'երթայ
բոսեկն շինելու :

Այրը կուգայ :

— Ի՞նչ եղեր ես , մայր :

— Մի՛ հարցնէր , զաւակս , մի՛ հարցնէր :

— Ի՞նչ կայ :

— Մազ մնաց որ կը մեռնէի կոր :

— Ի՞նչ եղաւ :

— Մայրդ մեռած պիտի գտնէիր այս իրիկուն :

— Ինչո՞ւ :

— Սանդուխէն վար գլորեցայ քարերուն վրայ :

— Տէր ողորմեա՛ , տէր ողորմեա՛ :

— Թեւս վեր չեմ կրնար կոր աւնել , կտարեցի՛ ,
ի՞նչ ըրի չիտեմ :

— Բըրբճի մը կանչեցի՞ք :

— Հիմա նոր ինկայ :

— Հարսը ո՞ւր է :

— Սենեակն է :

Այրը կ'երթայ կնոջը քով :

— Մայրս վարը կը շորչարուի կոր , դուն նստեր
քոջէ կը շինես կոր :

— Ի՞նչ եղեր է որ . . . ոտքը սանեցաւ քիչ մը եւ
կամացուկ մը նստաւ :

— Գլուխը զարկեր է :

— Մարդս գլուխը չզարնե՞ր , ի՞նչ կ'ելլէ անկից :

— Ճակատէն արիւն կը վազէ կոր :

— Մարդ չէ՞ , ճակատը չզարնե՞ր տեղ մը . . . ես
զարկած չունիմ . . . դուն զարկած չունի՞ս , . . . ան
զարկած չունի՞ :

— Թեւը չկրնար կոր շարժել :

— Մարդ չէ՞նք , թեւերնիս ալ կը զարնենք ոտ-
քերնիս ալ , բայց մայրերը շատ կը սիրուին , կնիկչ-

ները չեն սիրուիր . . . նալլէթ ըլլայ, թիւս ալ
փախցուցի :

— Խըրըխճի մը կանչենք :

— Ես չեմ խառնուիր, չատ սասկ ունիս նէ
խարճէ :

— Անանկ ճղենք որ տանջուի՞ խեղճը :

— Խեղճ . . . խեղճ . . . Խնչ խեղճութիւն . . . վա՛հ
զալալը . . . խեղճ է եղեր . . . Խնչ է եղեր . . . ճա-
կատը արիւններ է եղեր . . . Խնչ զօռ բան . . . վա՛հ
հալրում . . . կ'ողբես նէ քիչ մը լաց . . . օ՛հ հա՛,
բօխչի մը կանչէ, խըրիսճի մըն ալ կանչէ, քանի մը
հատ ալ դեղագործ կանչէ, երկու երեք հատ ալ կնիկ
բեր որ հիւանդը նային . ծանր է խեղճին վիճակը, այս
գիշեր կը հանէ չհաներ բան մըն է :

— Հիչ բան մը չունի՞ :

— Չունի հա՛, անիկա նազ կ'ընէ քեզի, ամէն
մարդ կ'իյնայ . . . տա ալ բան մը չէ հա . . . ճակատը,
գլուխը օխալըխ հացի մէջ խօթելու է, արիւնը կարի,
խըրըխճին սրարիթ է հիմա, թիւը պաղ ջուրին մէջ
դնելու է, քանի մը ժամէն կ'անցնի . իրար անցնելու,
չուարելու բան չկայ, նատինք կերակուրնիս սուտնք
և երթանք :

— Ո՞ւր :

— Խօսք չտուի՛նք Փիւբան հանրմին :

— Այս գիշեր շենք երթար, Խնչ կ'ըլլայ եղեր :

— Ինչո՞ւ չերթանք, Խնչ կայ փառք Աստուծոյ .
խօսք տուինք, չերթալ կ'ըլլայ, ամօթ է նէ . . . Խնչ
կ'ըսեն մարդուն :

— Այս գիշեր թող մնայ :

— Նալլէթ ըլլայ . . . ան ալ գտաւ իյնալու օրը .
սպասեց, սպասեց ու այսօր ինկաւ, մախտաւս ինկաւ որ
չերթանք :

— Խննթեցա՞ր :

— Ինչո՞ւ խննթե՞նամ , շատ ալ խելացի խօսք է
ըսածս :

— Այս կնիկը ս՞ով պիտի նայի այս գիշեր :

— Նայելու ի՞նչ ունի որ . . . երթամ նայիմ ան-
գամ մը :

Կեսուէրօջը քով կ'երթայ :

— Մաշտիլո՞ճ , բան մ'ալ չունիս . . . նովզերդ աղէկ
են . . . կարծեմ քիչ մ'ալ վրայ ես եկեր . . . ինձովը
եարամիչ է եղեր քեզի , ելիւր հացերնիս ուսանք չէ՞ք
չնոր՞ք :

— Ես չեմ գար , դուք կերէք :

— Գու՛ն չես գար նէ՛ մենք ալ չենք ուսներ :

— Կ'աշխատիմ գալու :

Հարսը երկանը կ'երթայ :

— Աչքդ լոյս . . . սիրող հանդիստ թող ըլլայ ,
կերակուրի պիտի իջնայ . . . սա շտպիկդ փոխէ որ
երթանք , զէրէ Բեբրոն հանրմին սիթէմը մտիկ ընե-
լու վախիտ չունիմ :

Կը տեսնէ՞ք , ս' հարսեր և կեսուէրներ , ս' քան
ծայրայեղութեանց կը մղէ զձեզ սէրը :

Պողոս առաքեալ հարսի և կեսուէրի յարարերու-
թեանց վրայ բան մը չէ գրած , բայց եթէ սղջ ըլլար՝
այսպէս պիտի խօսէր . Կեսուէրնե՛ր , սիրեցէք ձեր հար-
սերը՝ ձեր գուտկնորուն պէս :

Հարսնե՛ր , հնազանդ լերուք ձեր կեսուէրներուն որ-
պէս ձեր մայրերուն .

Այո՛ , այսպէս պիտի խօսէր , բայց դարձեալ մտիկ
ընող չպիտի ըլլար , որովհետեւ ինչ որ շիւղ կը տես-
նէ մայր մը իւր աղջկան աչքին մէջ , զերսն կը տեսնէ
իւր հարսին աչքին մէջ , և այն յոտակութիւնն զոր
առաքինութիւն կարծէ աղջիկ մը իւր մօրը վրայ ,

մոլութիւն կ'երեւայ երբ տեսնուի իր կեսուրին վրայ :

Խնչպէս հաշտեցնել ուրեմն հորսը կեսուրին հետ :
Ըստ մեզ երեք միջոց կայ :

Առաջինն է չկարգուիլ :

Երկրորդն է առաւօսները մօրը զանգատիլ իր կնիկէն և երկոյները կնոջը գանգատիլ մօրմէն :

Այս միջոցը ձեռք տաւծ են արդէն ամէն այն այրերը որոնց տունները հարս ու կեսուրի կռիւ կայ :

Երրորդն է եալմա բանեցնել սուներ և այնքան զործ տալ որ կռուելու ժամանակ չզոննին :

Այս միջոցն ալ արդիւնաւոր եղած է :

Բայց ըստ մեզ ամէնէն լաւագոյն միջոցն է որ հարսը աշխատի կեսուրը յարգելու , և կեսուրը ջանայ հարսը սիրել : Բայց ամէն պարագայի մէջ հարսը պարտաւոր է զինքը սիւցնել , որովհետեւ մեզմէ մեծերուն հնոգանդութիւն և յարգանք պարտինք , ինչ որ ալ ըլլան անոնց թերութիւնները :

Այսօր այսչափ , ուրիշ անգամներ նորէն պիտի խօսիմ ձեզ այս նիւթին վրայ , վասնզի հարս և կեսուրի զխտութիւնը քանի մը դասերով տաւտեկ կարելի չէ :



Ամէն բան իր ժամանակին

Ամէն բանի ժամանակը կայ, կ'ըսէ ժողովողը :
 Ժամանակ խնդալու, ժամանակ լալու, ժամանակ
 խօսելու, ժամանակ լսելու, ժամանակ քննադատելու,
 ժամանակ սրբիմաստելու : ժամանակ աշխատելու, ժա-
 մանակ հանդիպելու, ժամանակ կարելու, ժամանակ
 քակելու կարկասանքը, ժամանակ պաշտելու, ժամանակ
 զրօսնելու :

Շատ իրաւունք ունի ժողովողն, որուն կարծեաց
 ո՛չ միտն հակառակ քուէ չեմ սար, այլ նաեւ ըտրը
 ուժովս կը համակիրայիմ, և մեր ընտանեաց մէջ առ-
 րածելու նպատակաւ այս ճշմտաստեթիւնն՝ կը կրկնեմ
 թէ՛ ամէն բանի ժամանակը կայ, ժամանակ կուտե-
 լու, ժամանակ հաշտուելու, ժամանակ սպասուէին
 ձեռնելու, ժամանակ շնչելու, ժամանակ ամուսինն
 կործանելու, ժամանակ ամուսինն կանգնելու, ժամա-
 նակ ձեր թեւերն, ուսերն ու կուրծքերն արդոյ հա-
 ստարակութեան ցոյց տալու, ժամանակ ձեր թեւերն,
 ուսերն ու կուրծքերն արդոյ հասարակութենէն ծած-
 կելու, ժամանակ պարելու, ժամանակ սեղիզ քալելու,
 ժամանակ սուտ խօսելու, ժամանակ ճշմարիտ խօսելու,
 ժամանակ հազուելու, ժամանակ հազուելու, ժամանակ
 պճնասէր ըլլալու, ժամանակ պարզասէր ըլլալու, ժա-
 մանակ կիրակաւր եփելու, ժամանակ կերակուրը կեր-
 ցընելու, վերջապէս ժամանակ ամէն բանի, որ կ'ըսէ
 ժողովողը, որ կ'ըսեմ նաեւ ես :

45343 64

A 41642



Ներկեցէ՛ք ինձ ուրեմն հարցնել ձեզ , ո՛ր արկնույք , թէ ունի՞ք դուք ձեր տուներուն մէջ մէկ մէկ ժամանակացոյց որուն մէջ նշանակուած ըլլան ձեր աշխատելու և հանգչելու ժամերը , քննադու և արթնադու ժամերը , խնդարու և լալու ժամերը :

Երկրորդ անգամ ներկեցէ՛ք ինձ պատասխանել ձեզ թէ չունի՞ք ասանկ ժամանակացոյց մը : Թերևս ձեր մէջ գտնուին կանայք որ ունենան , բայց ես տեսած չեմ , և ասոր համար ալ ներքուսն կը խնդրեմ :

Դուք շատ անգամ կը խնդաք լալու ժամանակ , կը պարէք քալելու ժամանակ , կը քնանաք արթնադու ժամանակ , կը հանգչիք աշխատելու ժամանակ : Աչքալս տեսած եմ արիկին մ'որ ասաւտուուն կանուխ տանը բակին մէջ արթու մը գրկած բօլբա կը խաղար , և որ զիս տեսնելուն պէս ասնոր դուռը ուժով գոցեց ծուռ ծուռ նայելով ինձ : Նայապէս հանգիպած եմ արկնույց մը որ փողոցին մէջ քալելու ժամանակ վալսի քայլեր կ'տաներ : Չէ՛ք տեսած խեղճ էրիկն որ սեղանին առջև կը սպասէ պատրաստքով ի ձեռին , որպէս զի կինն իր պզտիկ աղուն շորերը լուայ , լինցունէ և հաճի վեր ելնել կերակուր ուտելու համար : Չէ՛ք տեսած պզտիկ աղու մը ճիչն ու աղաղակն որ լալով կը ճաթի , կը մարի՝ սպասելով որ մայրը մտերը շակէ ու բարհաճի կտթ աուլ : Չէ՛ք հանգիպած կնոջ մը՝ որ գլխարկ գնելու կ'երթայ ասն մէջ մինակ թողլով էրիկն որ քիճաւսէ բռնուած է : Չէ՛ք տեսած ընտել արիկին մ'որ կէս օրին գիշերապահատով , այսինքն պառկելու հագուստով , նստած է պատուհանին առջև : Բայց ո՛ր մէկն ըսեմ... և այս ամէն անկարգութիւններն ո՛չ ապաքէն յուսաջ կուգան ժամանակացոյցի մը պակասութենէն :

Արդարեւ կան կանայք որ ունին ժամանակացոյց ,

բայց այս ժամանակացոյցին վրայ ալ կամ պարել գըր-
ւած է կամ երգել կամ խմել կամ ուտել կամ պառ-
կիլ կամ պողտիլ, և լաւ էր ընտել ժամանակացոյց
չունենալ քան թէ տասնկ ժամանակացոյց մը :

Մտիկ ըրէ՛ք :

Թորոս աղան իր սիրելի բարեկամներէն մին առնը
կը հրուիրէ մէկ անգ ընթրելու համար : Յարէթ ա-
ղան, այս էր բարեկամին անունը, չմերժեց հրուէրը :
Երկու բարեկամները մէկտեղ առն կ'երթան, ժամը
մէկուկէսին (ը . թ .) :

Սպասուէին՝ որ դուռը բացած էր, կ'առաջնորդէ
հիւրը ընդունելու թեան սենեակը, ուր չուշտար
մանել նստել Թորոս աղան : Սենեակն ընտիր կարասի-
ներով կահաւորուած է : Անգղիական գորգ մը փռուած
է, որուն վրայ դրուած է, դէպի դրան կողմը, մուկի
խափան մը և տման մը, թաւիչով ծածկուած երկու
բազմոցներ՝ որոնց միսն վրայ դրուած է Թորոս աղա-
նին գիշերուան սկուճան, կնքարին, ձեռքի պզտիկ
հայելի մը և պլնձե քաղաք մը, ջուրի սրուակ մը,
խակ միւսին վրայ կը սեսնուէին պղպիկի թուղթեր, և
քանի մը աթոռներ : Երևնուէ ընտիր սեղան մը դրուած
է բազմոցին վրայ՝ նոյնպէս թաւիչով ծածկուած : Քօն-
սային վրայ կ'երևան երկու ծաղիկի անօթներ, մար-
մարիանէ պզտիկ արձաններ, խաճուէի դաւաթներ,
ազու քանի մը շորեր և վարախքներ, քիւռնիւր մը,
երկու սանար, անուշահոտ օճառ մը քառակուսի, շիշ
մը լովսնտոս, ձուկի պզտիկ կասկարս մը և զոյգ մը
աղու կօշիկ : Այս անասորանը կը յիշեցնէ ինձ առն մը,
զոր նկարագրած եմ պճնասիրութիւն անուն նամակիս
մէջ :

— Ի՞նչ վիճակ է այս, պօռոց Թորոս աղան սպա-
սուհւոյն :

— Սենեակը պիտի աւլէի , ուրիշ գործի կանչեցին ,
չկրցի շտկել :

— Տիկինը ս՛ւր է :

— Շրջազգեստին բռօզանն տալու համար մօտիս-
թռային գնաց :

— Սօֆին ս՛ւր է :

— Իւթիւ կ'ընէ կոր :

— Աղաւնին ս՛ւր է :

— Կը հագուի կոր :

— Մայրս ս՛ւր է :

— Աօթազիբքը կը կարգայ կոր :

— Շուտ ըրէ՛ , շտկէ սա սեղը :

Կարմրեցու թորոս աղան և Յարէթ աղայէն նե-
րունն խնդրեց :

— Ներեցէ՛ք , Յարէթ աղա :

— Ի՛նչ կայ ներելու

— Ներունն կը խնդրեմ :

— Ներունն խնդրելու բան չկայ , առն է , ամե-
նուս ալ առնը տասնկ բաներ կ'ըլլան , թո՛ղ որ բան
մ'ալ եզտծ չէ , Պիտի աւլէ եղեր , վերջը ուրիշ գործ
եկեր է , ձգեր է . . . :

— Ասանկ ալ անկանոնութիւն . . . :

— Անկանոն բան մը չկայ , թորոս աղա՛ , հան-
դարանցէ՛ք :

Սպասուէին կարելի եղածին չափ շուտով շտկեց՝
չտկրանց և աւելորդ բաները դուրս հանեց :

— Շուտ ըրէ՛ , գնա՛ օղի բեր շիշ մը , հրամայեց
թորոս աղա սպասուէնոյն , երբ սա վերստին մտաւ
սենեակը :

Սպասուէին գլուխը ծռելով դուրս ելուէ :

— Զարմանալի սպասուէի մ'է , ցնդած է , ապո՛ւշ

է, ի՞նչ է... չիցտեմ, ըստ թորոս աղան, սպասուհւոյն վրայ բնաճուարել ուղեւրով յանցանքը :

— Շատ գործ ունէր խեղճը... չէ կրցած շտկել սենեակը : Բայց, կ'աղաչեմ, մի՛ նեղուիք, եղածը մեծ բան մը չէ :

— Բայց ես կ'ուզեմ որ ընդունելութեան սենեակ մը պահուելու է միշտ այնպիսի վիճակի մը մէջ որ պատճառ չստայ տան արտաջ բարկութեան :

— Չեմ ըսեր թէ, իրաւունք չունիք, բայց վերջապէս սաւն է, ասանկ պզտիկ բաները թերութիւն չեն համարուիր :

Սպասուհին օղին բերաւ :

— Աս ի՞նչ շիշ է... սա հանքային ջուրին շիշն է... եսնոսի շիշ :

— Այո՛, օղիի շիշին մէջ սաջի օր քիչ մը հինա կաղի տախք չօծուխին համար աէ, շլուայինք սասնո, անոր համար... :

— Տէր պորմեան՛յ... տէր պորմեան՛յ... :

— Վշտա չունի, թորոս աղա, սա ալ շիշ է, ան ալ շիշ է, ըստ Յարէթ աղան :

— Անանկ է ձեր բողբէն է որ այսօր ասանկ անվայել բաներ կ'ըլլան կոր... :

Այս միջոցին մայրը ներս մտաւ, սովորական բարեւեր փոխանակուեցան :

— Համեցէ՛ք, Յարէթ աղա, տաէ՛ք նայինք, ըստ թորոս աղան, գաւաթն Յարէթ աղային հրամայընելով :

Յարէթ աղան, գաւաթը տաւ, շրթանցը գըրցուց, վարանեցաւ խմելու, բայց իւր վարանումը ջանաց ծածկել թորոս աղային :

Թորոս աղան որ սովոր էր ի մի ումպ պարպել օղիի գաւաթը, մէկունց բերանը պարպեց օղին ու

հազարով , քիթը բերանը ծամակերով , թքնելով
պօռուց :

— Աս կա՛ղ է , կա՛ղ . . . :

— Այո՛ , ինձի ալ անանկ եկաւ , յարեց Յարէթ
աղան :

— Հասկցա՛յ , հասկցայ , նեառեցաւ մայրը , կար-
ծեմ որ առջի օրը կազի թէնէքէն շիշերու մէջ պար-
պեցին , պինդիկին մէջ կտոր մը օղի կար , պզտիկ
շիշի մը մէջ լեցուցին ու աւելցած կազն ալ պինդի-
կին մէջ դրին , կարծեմ ան պինդիկէն լեցուցեր , բե-
րեր է , սերսէմ աղջիկ . . . է , կաղը վնասակար բան
մը չէ ետ . . . կուրծքի և հազի աղէկ է եղեր , կ'ըսեն
կոր բժիշկները :

Թորոս աղան հազարով , թքնելով դուրս վա-
զած էր :

Թորոս աղային մայրը սպասուէին կանչեց , քիչ
մը չախեց :

Սպասուէին ինքզինքը արդարացուց ըսելով թէ՛
մտքէ չէր անցնէր որ օղիի շիշին մէջ կազ լեցուցած
ըլլային :

— Դուն անանկ բաներու մի՛ խառնուիր , պօռուց
Թորոս աղային մայրը յետոյ :

— Պզտիկ շիշին մէջ օղի կայ , գնա՛ բեր :

Սպասուէին գնաց և շուտ մը վերադարձաւ յայտնե-
լով թէ՛ շիշին մէջ արդարեւ կար քիչ մը օղի , բայց
այն օղիով երկու օր առաջ աղան կանակը չփեր էին
պղպեղով :

— Բժնեաք բերէ՛ք ուրեմն , հրամայեց Թորոս
աղային մայրը :

Բժնեաքը բերին :

Թորոս աղան ալ ներս մտաւ :

— Կոկորդա երեցաւ , ըսաւ հազարով :

— Իսկ մը չէ կ'անցնի, պատասխանեց Յարէթ աղան քօնեաք մը խմելով :

Թորոս աղան և հիւրը քանի մը գուռաթ քօնեաք խմեցին և ասն աիկնոջ հրաւէրին վրայ սրահ ելան ուր դրուած էր սեղանը :

Բազմեցան սեղանը, բայց Թորոս աղային աիկինն որ նոր եկեր էր, և երկու աղջիկները չէին երեւոր :

— Տիկին, պուստ Թորոս աղան, ձեզի կ'սպասենք կոր, վար իջէք :

— Գլխարկս կը հանեմ կոր, կուգամ կոր... պուստ աիկինը վերէն :

— Լուսիկ, չգա՞ս :

— Պօթիխս կապը կը քակեմ կոր, կուգամ կոր :

— Աղաւնի, ս'ըր ես :

— Միտոս իւթիւ կ'ընեմ կոր... լմեցայ... կուգամ... ինծի մի' սպասէք :

Թորոս աղան կը նեղանայ, բայց հիւրին առջեւ չուզեր իւր նեղութիւնը յայանել, մտնուանդ թէ՛ տրդարացնել կը ջանայ կինն ու աղջիկները ըսելով :

— Մեր աիկինը հաղուսաները մաքուր պահելու մտաին մէկ հատիկ է, փողոցի հաղուսաները չաղատակու համար, ասն մէջ ուրիշ հաղուսա կը հագնի : Լուսիկն ալ բնա նէ՛ ճաշակով կը հաղուի, անանկ սորաաի աղջիկներէն չէ, աղէկ ալ կը վայելցնէ : Աղաւնիին գալով՝ աշխատասէր աղջիկ մ'է, վայրկեան մը պարտապ չմտար, քո՛ աղջիկ, կ'ըսեմ երբեմն, նստէ՛, քիչ մը շունչ տ'ա, սրտը կ'ըսես, կ'աշխատի ու կ'աշխատի : Ի՞նչ պիտի ընես, ծնունդնին տասնկ է : Ես ալ կը նայիմ որ աղէկ յատկութիւններ ևն ասոնք, քերտնս չեմ բռնար :

— Իրաւունք ունիս :

— Է՛յ աիկին, շուտ ըրէ՛, պուստ նորէն Թորոս

աղան, քիչ մ'ալ վերջը փոխուէ՛, հաղուսաներդ չին
աղտտաիր :

— Շրջադգեսաս կը փոխեմ կոր, լինցայ . . . :

— Սօֆի՛, Սօֆի՛ :

— Վրաս ֆուչալամիչ կ'ընեմ կոր . . . կուգամ
կոր . . . :

— Աղաւնի՛, յոգնեցար աղջիկս, յոգնեցար, մեղք
ես, եկո՛ւր . . . :

— Լինցայ հայրի՛կ, լինցայ, հիմա կուգամ :

— Չիյանն որ հիւր կայ, անոր համար քիչ մ'ալ
անհոգ կը վարուին կոր . . . հրամեցէ՛ք, Յարէթ աղա,
հրամեցէ՛ք, մենք սկսինք ուսել, անոնք ալ կուգան :

— Շտա աղէկ :

Թորոս աղան, մայրն ու հիւրը սկսան ուսել :
Թորոս աղան երբեմն երբեմն բարձր ձայնով կը կան-
չէր կի՛նն ու աղջիկները որք միեւնոյն պատասխան-
ները կուտային : Կշտացան, սեղանէն ելան, լուսաց-
ուեցան, սրբուեցան, ընդունելութեան սենեակը
մտան-

Մէկ ժամէն սպասուէին խահուէ բերու :

Թորոս աղան պուռաց :

— Տիկին, եկուր խահուէդ խմէ :

— Կերակուր կուտեմ կոր, հիմա կուգամ :

— Լուսիկ, խահուէդ պողեցու :

— Տէր ողորմեա, հիմա նստայ սեղան :

— Աղաւնի՛, խահուէդ չպիտի՞ խմես :

— Պատառ մը հաց չուտե՞մ, մեղայ :

Յարէթ աղան Թորոս աղային նեղուիլը զգալով,
քիչ մըն ալ կը նստի ու կը մեկնի :

Թորոս աղան որ բարկութեանը ժամանակ չու-
ղեր կնոջը դիտողութիւն ընել՝ կ'երթայ պառկելու
միշտ պուռով :

— Պառկելու ժամանակ է, ելէ՛ք պառկեցէ՛ք :

— Խոհուէնիս չի խմի՞նք :

Թորոս աղան կը պառկի : Առաւօտուն իւր սովորական ժամուն կ'արթննայ, քթին տակէն մուտաւով, սակաւին կը քնանան կոր :

Մինչեւ կէս օր կը քնանան տիկինն ու աղջիկները : Երեկոյեան տուն կը դառնայ Թորոս աղան : Կ'առանձնանայ կնոջը հետ և կ'սկսի դիտողութեան :

— Ի՞նչ էր երէկ գիշերուան խայտառակութիւնը, խողք եղայ հիւրին տաջեւը . . . :

— Խողք ըլլալու ի՞նչ կայ :

— Հիւրին սենեակը սակն ու վրայ էր :

— Իմացայ, կ'ուլէր կոր, ուրիշ գործ ելաւ, անանկ ձգեց . . . խողք ըլլալու բան չիկայ ասոր մէջ :

— Բուրկաթիֆի շիշով օղի բերին :

— Ի՞նչ վնաս ունի եղեր, հինա ետղի կար օղիի շիշին մէջ, անոր մէջ դրեր են :

— Ազէկ ա՛, ինթիքանի մէջ լեցնէիք գոնէ և տնով հրամցնէիք :

— Կէնէ մի՛ պաշլայէր, Աստուածդ սիբես :

— Բերածնին գոնէ օղի՞ ըլլար, կա՛ղ բերին, կա՛ղ . . . :

— Էյ սխալմունք է, ամէն տունի մէջ կ'ըլլայ, պիւթիւն պարապ խօսքեր են տառնք :

— Այնուհետեւ կերակուրի կ'սպասենք չէք գար :

— Գործ ունէինք . . . կերէք կ'ըսենք կոր ձեզի, ինչո՞ւ կ'սպասէք, մենք ալ անօթի չ'մնացինք ո՛, մենք ալ կերանք . . . ասանկ պարապ բաներու համար բարկամտու սիրտ ալ ունիս, կը զարմանամ քու վրայ . . . :

— Խոհուէի սպասեցինք չեկաք :

— Կերակուր կուտէինք կոր :

— Պառկեցէք կ'ըսեմ, չէք պառկիր :
 — Խահուէ կը խմէինք կոր :
 — Արթնցէք կ'ըսեմ, չէք արթնար :
 — Կը պառկէինք կոր :
 — Շատ աղէկ, իրաւունք ունիք :
 — Դուք իրաւունք ունիք, գուք... յանցաւորը միշտ մենք են :

— Խաղք ու խայտառակ եզայ :
 — Բան մ'ալ չեղար :
 — Գոնէ՛ հիւրը պատուերու համար պարտուար էիք սեղանը նստիլ :

— Մէյ մ'ալ ս'վ պիտի տեսնէ անոր երեսը, հոգս է հասեր :

— Կերակուրի ժամանակ իւթի՞ւ կ'ըլլայ, կերակուրի ժամանակ շրջազգեստ բրովա կ'ըլլո՞յ, կերակուրի ժամանակ հագուել կ'ըլլո՞յ :

-- Ամէն օր չէ՛ ես, ստրին անգամ մը պատուհեր է :

— Մէյ մ'ալ չեմ ուզեր որ ասանկ անվայել բաներ ըլլան :

Թորոս աղան մի և նոյն դիտողութիւնները կ'ընէ նաեւ աղջիկներուն, որ կը խոստանան ուրիշ անգամ չգանուել նմանօրինակ թերութեանց մէջ :

Տարակոյս չկայ թէ երբ ամէն գօրծ ժամանակին կատարուի, ասանկ անտեղութեանց սեղի չարուիր : Ամէն էրիկ մարդ ունի իր ժամանակացոյցը, իրենց վաճառատան մէջ, որպէս ամէն պղտիկ աղայ վարժարանի մէջ, իւրաքանչիւր կ'ինն ալ ուրեմն ունենալու է իր ժամանակացոյցը, որովհետեւ ինչպէս ըսինք, ամէն բանի ժամանակը կայ, պղտիկ խոստորում մը մեծ խոտորումներու կը ասնի զձեզ : Չմոռնանք յիշելու թէ՛ ինչպէս որ խնդալու ժամանակը

կայ, լալու ժամանակը կայ, այնպէս ալ հինաւ ետղիի շիշը կայ, օղիի շիշը կայ և կաղի շիշը կայ: Ժամանակացոյցին քովը կաննայք պարտաւոր են կախել նսեւ մէյ մէկ շիշացոյց, որովհետեւ ամէն բոնին սեղն ալ կայ, թէ և ժողովալն այս մասին լուսթեամբ անցած է:

Գ.

ԱՆԿՈՂՆՈՅ ԿՌԻԻ

— Հարսը ինչպէ՛ս կ'երթայ կոր, մայրիկ, ըսկոս՞ւ գործ տեսնել:

— Չըսկատւ տակաւին, աղաս:

— Ըսել է որ սանը բոլոր գործերն ալ քու վրայդ են:

— Այո՛:

— Ի՞նչ պիտի ընենք ասանկ:

— Կամոց կամոց պիտի վարժուի հարկաւ, աղաս, դեռ չորս ամսու հարս է, կերպով մը հասկցնելու է իրեն որ ինքն ալ աշխատի քիչ մը:

— Չաշխատիր կոր, մայրիկ, գիշեր մը չելու անկողինները ձգելու:

— Օր կ'ըլլայ որ կը ձգէ:

— Մայրիկ, քեզի բան մը ըսեմ, այս գիշեր դուն մեր սենեակը կուգաս անկողինները ձգելու. ես քեզի կ'ըսեմ. Մայրիկ, կը վայլէ՞ որ դուն ձգես մեր անկողինները. դուն ալ ի՞նչ մնաս ունի կ'ըսես. ես ալ չեմ թողուր և կ'ելլեմ անկողինները շինելու, դուն

ինծի կ'ըսես . աղաս , յոգնած դառգրած եկեր ես , կրնա՞ն
անկողին շինել , թո՛ղ ինծի շինեմ : Ես թող չեմ ստոր
որ դուն շինես , դուն ալ թող չես ստոր որ ես շինեմ :
հարսն է կեղտոյ ու կը շինէ . ինչպէ՞ս է սա ճամբան :

— Աղէկ է , բայց սն ճամբան բաց է , բացէ
ի բաց հարսին հրամայել է որ անկողինները շինէ . ես
չեմ ուզեր որ հարսս վերաւարուի : Այս ճամբով հարսը
հարկաւ կ'ելլէ կը ձգէ անկողինները , բայց կը
վշտանայ :

— Վշտանալու ինչ կայ , բուժիզտէն պիտի հաս-
կըցնենք որ . . . :

— Ասոր բուժիզտէնը կտ՞՛յ մի ես , ես կ'ուզեմ
որ հարսս ինքնիրմէն սոյգը ընէ ու աշխատի :

— Եհո՛ւր փորձենք անգամ մը , վշտանայ նէ
սիրաը կ'աւնենք :

— Շատ աղէկ , աղաս :

Գիշեր կ'ըլլայ . այր ու կին կը քաջուին իրենց
սենեակը : Տղուն մայրը ներս կը մտնէ ու կը պտտ-
րատտուի անկողինները ձգելու :

Խաղը կ'սկսի :

— Ի՞նչ պիտի ընես , մայրիկ :

— Անկողինները պիտի ձգեմ :

— Կը վայլէ՞ որ անկողինները դուն ձգես :

— Ինչո՞ւ չպիտի վայլէ , դուք իմ դաւակներս էք :

— Չըլլար , ես կը ձգեմ :

— Շուկայէն յոգնած դառգրած եկեր , մեղք չե՞ս ,
աղաս , ես կը ձգեմ :

— Ո՛չ , չըլլար :

— Ինչո՞ւ պիտի չըլլայ :

Հարսը կտատարեալ հանդիսատես է :

— Իրաւ որ կը բարկանամ .

— Գուն ձգես նէ ես կը բարկանամ :

— Ինչո՞ւ ասանկ կը խօսիս , մայր :

— Շինեմ նե՛ ձեռքերս աշրնմիչ չըլլոր ա՛ . պարտազ նստելն ի՞նչ կ'ելլայ , ես կը ձանձրանամ պարտազ նստիմ նե՛ :

— Ե՛ս ալ կը ձանձրանամ , սա պարտազ նստող կիները չե՞մ տեսներ մի՛ , շատ գեշ կ'ըլլամ :

— Ամէն բնութիւն մէկ չէ՛ , տղաս :

— Մայրի՛կ , թո՛ղ տուր , արդէն բարկութիւն ունիմ , բերնէս ծանր խօսք մը պիտի փախցնեմ :

— Ի՞նչ խօսք պիտի փախցնես :

— Մինչև այսօր սիրտդ վիրաւորած չեմ , չեմ ալ սեղեր վիրաւորել , թո՛ղ ատեր որ շինեմ :

— Թող չպիտի ամա՛ :

— Հետք գեշ պիտի վարուիմ , մայր . տեղդ նսա՛նք :

— Չպիտի նսաիմ :

Հարսը՝ ոտքի ելլելով .

— Ի՞նչ կուի կ'ընէք , կը վայլե՞ որ աղայ մը իր մօրը հետ այսպէս վարուի :

— Ապրի՛ս , հարսս :

— Մօր մ'ալ չվայլեր իր զուկին հետ խստութեամբ խօսիլ :

— Ասանկ է ետ , պատասխանեց այրը :

— Կուի բնելու պէտք չկայ :

— Ապրի՛ս հարսս :

— Երկուքնիդ ալ տեղերնիդ նստեցէ՛ք , կ'ըսէ նոր հարսը :

— Այդ ուրիշ :

— Հիմա ըսեմ ձեզի , շարունակեց հարսը , ասանկ ոչինչ բաներու համար կուի բնելը ամօթ բոն է , տեղը չկայ , ե սրպէս գի անգամ մ'ալ չկրկնուին ասանկ կուիներ , գիւրի՛ն միջոց մը պիտի տառջարկեմ

ձեզի, միջոց մը որ պարտաճանաչութեան վրայ հիմնուած է: Ի՞նչ մեղքս պահեմ, չվայրեր որ կեսուրս ամէն իրիկուն հաս գայ ու մեր անկողինը շակէ, քեզի ալ չի վայրեր: շխտակի ալ սա է. ամէն քան վայելում մը ունենալու է. սւտի կուտաջարկեմ որ գիշեր մը գսն ձգես, գիշեր մը մայրդ:

— Գիշեր մը ես, գիշեր մը մայրս, հարցուց ամուսինը:

— Անտնկ չէ՞ մի ես. այս գիշեր դուն ձգելու ես:

Կեսուրը կամաց մը կ'ելլէ սննետկէն, և այրը կ'սկսի անկողինները ձգել: Այս միջոցին կինը կը մեղադրէ այրը՝ մօրը հետ կռիւ ըրած ըլլալուն համար, և քաղաքավարութեան հակառակ կը դաննէ անոր ընթացքը:

Առուտոս կ'ըլլայ:

— Սիրելի հարսս, երէկ գիշերուան ըրածդ քիչ մը դպու ինծի:

— Դպրու մի ես քեզի թէր ելայ նէ:

— Ի՞նչպէս թէր ելար:

— Չխօսէի նէ ամէն գիշեր դուն պիտի ձգէիր անկողինները, սղէկութիւն ըրէ որ գէշութիւն տեսնաս կ'ըսեն նէ իրաւ է եզեր: Սնուակներս կ'առնեմ ես հիմա կ'երթամ մօրս սունը, ես չեմ կրնար մնալ հոս:

Հարսը մօրը սունը կը փոխադրուի:

Իրիկուն կ'ըլլայ. այրը սուն կը դառնայ:

— Երէկ գիշերուանին ի՞նչ կ'ըսես, մայր:

— Երէկ գիշերուանը բան մը չէ, նորը կայ:

— Նորն ինչ է:

— Հարսը մօրը սունը գնաց:

Եւ պատճառը կը յայտնէ:

Այն արտօր իր կինը կը պահանջէ :

Կինը կը պատասխանէ :

— Մինչև ուր գտա տուն չվարձես չեմ գար , ես մօրդ սաւնը չեմ նստիր :

— Պիտի գտա :

— Չպիտի գտմ :

— Բերել պիտի տամ :

— Չպիտի յաջողիս :

— Էրիկդ չե՞մ , ուր որ երթամ հետս պիտի գտա :

— Կինդ չեմ , հայրդ մայրդ պիտի թողուս ե
կակէս պիտի գտա :

— Կինս կ'ուզեմ :

— Չտա տուն մը բանէ ու կնիկիդ գնա :

— Չտա տուն բանելու կարողութիւն չունիմ :

— Կնիկ չկայ ուրեմն քեզի , գուրս ելի՛ր :

Թողունք այժմ ամուսնութեանց թուայն օր ըստ օրէ նուագման այլ ե այլ պատճառներն ու հարցներնք միայն թէ այն մարմինն որ ամուսնական խնդրոց գատատանով կ'զրազի , բնա՛ւ պատճառ տուած չէ՞ ամուսնութեանց թուայն նուագման :

«Յիշատակարան» 1512-1932 (Վ. Չարգարեան)

Վարձատրուած Իզմիրեանց մրցանակու և Ամբողջ գործը կը բազկանայ 5 հատորներէ (600 էջ 500 լուսանկարներով) և տեղի քան 120 երևելի հայերու մանրամասն կենսագրութիւններով, ամբողջ գործը կ'արժէ 150 հ գ․

Քաղուածք

Պարունեանի արամտութիւններէն

— Սէրը սնունդ հիւանդութիւն մ'է ուսկից ցաւօք սրտի կը բաժնուինք :

— Բարեկամութեան՝ ինչպէս նաեւ սիրոյ մէջ , մարդ չգիտցածսին տւելի երջանիկ կ'ըլլայ , քան թէ գիտցածսվը :

— Սիրահարոց երգումներուն համար , երկինք պատիժ չեն տար :

— Ինքզինքը պահել չուզող կինը՝ պահելէն գըժ-լար բան չկայ :

— Անկորելի է սէրը պահել , վասնզի ինքնիրեն կը մասնուի :

— Սիրոյ երգումներն իր սնյարատուութիւնը կ'ապացուցանեն :

— Ի՞նչ է սիրուհին — Կին մը որու քով գոց գիտցածնիս չենք յիշեր , այսինքն իւր սեւին բոլոր պակասութիւնները :

— Կանանց մէջ գեղեցկութենէն զատ իրական անհաւատարութիւն չկայ :


— Անմեղութենէ հաճոյք չգգացողներու համար ամուսնութիւնը մի միայն վիշտ կը հայթայթէ :

— Տասնընիւց տարեկան մէկու մը համար պարը զբոսանք մ'է , քսան և հինգ տարեկանի մը համար պտորուակ մը , իսկ քառասուն տարեկանի մը համար նեղութիւն մը :

— Կանանց ամենէն մեծ թշնամիները կ'իննրն են :



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220041642

{504.}

A 41642

ՅՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

Շարա ՍԻՒԼԷՅՄԱՆ Փառա ԹԻՒ 31, Գահիրե
Նագուպիան ԵՒՖԻՆ ՂԷՄ

Յ. Յ. Պարոնեան՝	Ե. Դ.
Սիրոյ Միջնորդները	2
Ս.սանին Տեսարաններ	2
Հասնոսի ձեռաստարը	10
Ա. Արիխարեան՝	
Դատապարտեալը և Երազի մը Գինը	4
Կատակ մը	2
Ե. Օսեան՝	
Ազգային Բարերար	2
Պատերազմ և Սողազութիւն	1
Վաճառականի մը Նամակները	1.5
Ճեպրնիթայ Նորոսինը	1
Յ. Չիլանեան՝	4
Ա. Շիլանեան՝	
Կարագանէն Եւաք	4
Թամարո	3
Գ. Համբիկեան՝	
Ամուրիները	2
Վ. Փախազեան՝	
Պատմութիւն Հոյ Գրականութեան	25
Ժողովրդային Օրերէթներ՝	
Արչըն մ՞այ Ալան	2
Նա Չը Լինի Սա Լինի	2
Ուշ Լինի Նուշ Լինի	2
Սիմոն Փիւլիլեան	15
Փարոսի Պահապանները	1.5
Աերպ Պատանի Զինուորը	1
Արաբերէն Սօսակցութիւն	4
Յիշատակարան (4 հատոր)	120